

Փորձը դեղեցիկ էր ու յանդուգն. պատ-  
րանքն հզոր. ընդամէնը երեսուն հինգ տարի  
առաջ Միտհատեան սահմանադրութեան եւ հե-  
ղինակի եղբրական վախճանը մոռցուած էր.  
Արեւմուտքը վերստին դիւրահաւան եղաւ.  
Սահմանադրութիւն... Երիտասարդ թիւր-  
քեր... Եւրոպա ուսած մարդիկ... ո՞վ գիտէ:  
Լուծումն չէ՞ այս արդեօք Արեւելեան նը-  
զովուած կնճիռի:

Եւ ինչպէս այսօր՝ քեմալիզմի հանդէպ՝  
Եւրոպական հասարակաց կարծիքը շունչը բըռ-  
նեց ու սպասեց: Ծառերը հաւատով, ուրիշնե-  
րը համակրանքով եւ ոմանք լուկ կասկածով՝ ա-  
ռանց չարամտութեանն):

Յամենայն դէպս Եւրոպական բոլոր եր-  
կրներում համակրանքի եւ բարեացակամու-  
թեան մի շարժում ծայր տուեց ի նպաստ Ե.  
բիտ. Թիւրքերի:

Հայկական սարսափների մասին այլեւս  
խօսք չկար. Երիտ. Թիւրքերի շարժումը նոյն-  
իսկ Կարմիր-Սուլթանի օձիքը պահ մը ազա-  
տեց:

Մի առժամանակ — հազիւ մի տարի —  
հայութիւնն էլ շունչ առաւ. թուում էր, թէ  
Արեւելքը վերջապէս ազատուում է թիւրքական  
մղձաւանջից խաղաղ ճամբով, առանց ցնցում-  
ների: Անցեալի՝ դժնդակ, արիւնոտ անցեալի

1) Փարիզի էի 1908 թուի ամբանը, երբ  
մի օր Boulevard Saint Michel-ի վրայ հանդի-  
պեցի «Միութիւն ու Յառաջադիմութիւն» կու-  
սակցութեան պետ Ահմէտ-Ռիզային: Քաջա-  
ծանօթ էի. Իշխան Սաբահէդդինի դումարած  
համաժողովներին՝ Փարիզում 7-8 տարի առաջ  
ծանր բանալիէներ էինք ունեցած. Ահմէտ-Ռիզան  
փաստաբանում էր ընդհանուր բեֆորմների  
ծրագիրը օսմանեան ամբողջ կայսրութեան  
մէջ, իսկ ես հակաճառում էի ուժգնօրէն ապա-  
ցուցանելով, որ դա սուլթան Համիդեան մե-  
թոք է՝ վիժեցնել այս կամ այն տառապող ու  
ըմբոստացած ժողովրդի ազատադրութիւնը:  
Բաժանուած էինք սառն:

Եւ այժմ՝ Ահմէտ-Ռիզան վրաս սլացաւ  
հրճուանքով, ջերմօրէն ձեռքս թօթուեց, ինչ-  
պէս հին բարեկամի եւ հաղորդեց ինձ Սահմա-  
նադրութեան հռչակումի լուրը Կ. Պոլսում:

մոռացումի եւ ներումի սրտապարար օրեր էին.  
Ստամբուլի փողոցներում ջերմ համբոյրներ է-  
ին արձագանգում:

Մարդկային եղկելի գոյութեան հիմունքը  
վատաստութիւնը չէ, այլ լաւատեսութիւնը:  
Այնպէս թշուառ է կեանքը, որ յաճախ հաւատը  
փնտոում ես անգամ անյուսութեան մէջ՝ հա-  
կառակ զարհուրելի փորձերի:

Պատրանքը բնութեան ամենահզոր եւ ա-  
մենավտանդաւոր պարզեւն է:

Այդ պատրանքով օրօրուեց հայութիւնը  
թիւրք Սահմանադրութեան սկզբնական շրջա-  
նում, մինչեւ որ նոր ու սարսաղաղեցիկ ջար-  
դերի ահաղանդը հնչուեց Կիլիկիայից:

Երեսուն հազար անմեղներ ի արիւնն էր  
թափուած Ադանայում եւ շրջակայքում: Թիւր-  
քը՝ թիւրք էր, հին թէ երիտասարդ. հիասթա-  
փութիւնն ահարկու եղաւ:

Պատրանքը շամանդաղի պէս ցնդուեց. եւ  
Երիտասարդ Թիւրքերի Սահմանադրութիւնը  
արդէն 1910 թուից — որպէս մի գոլուելի ու ար-  
ինաթաթաւ լաք դնաց թառելու սուլթանա-  
կան թանդիմաթների, խաթթը-հիւստայինների  
կողքին. օսմանեան ոճրակերտ պետական ար-  
խիւներում:

Թաղուեց Սահմանադրութիւնը, բայց  
կանգուն մնացին Երիտ. Թիւրքերը: Նրանք

Նա խանդավառուած էր ու երջանիկ:

Իր յաղթանակն էր:

Արդար լինելու համար պիտի ասեմ, որ  
այդ լուրը ես էլ ընդունեցի խնդութեամբ...  
Ճաշեցինք միասին:

Ահմէտ-Ռիզայից բաժնուելով շտապով  
գնացի Փրանսացի մեր հինաւուրց բարեկամ ու  
արեւելադէտ Ե-ի կարծիքը լսելու այս խոչը՝  
քաղաքական փաստի մասին:

Նա ուշադրութեամբ աւանջ դրեց ինձ եւ  
հանդարտօրէն ասաց.

«Ո՛չ, Արեւելեան Հարցը թիւրք Սահմա-  
նադրութեամբ լուծուած չէ եւ ոչ Հայկակա-  
նը: Սա միայն կ'արադացնի օսմանեան կայս-  
րութեան քայքայման պրոցէսը. տասն տարի  
չանցած, Թիւրքիան բաժան-բաժան կը լինի»:

Ուղիղ տասն տարի յետոյ — 1918 թուին  
Դաշնակիցները գրաւեցին Կ. Պոլիսը եւ օտտո-  
մանեան կայսրութիւնը փլաւ: Ա. Ա.